ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2026 թ. հուլիսի 28-ից օգոստոսի 10-ը

«Մեկ գոտի, մեկ ճանապարհ երկրների համար աշխատանքային անվտանգության վերահսկողություն և իրավապահ մարմինների կարողությունների զարգացում» խորագրով դասընթացին մասնակցելու նպատակով Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

- Լուսինե Հարությունյան, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի և աշխատանքի վարձատրության քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ,
- Հեղինե Բադալյան, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի և աշխատանքի վարձատրության քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ,
- Աննա Գևորգյան, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության արտաքին կապերի վարչության ավագ մասնագետ:

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն (այսուհետև՝ Չինաստան), մայրաքաղաք Պեկին, Հունան նահանգի Սյանթան քաղաք, 2026 թ. հուլիսի 26-ից մինչև օգոստոսի 11-ը ներառյալ:

3. **Հրավիրող կողմը.**

Չինաստանի արտակարգ իրավիճակների կառավարման նախարարությանը կից գործող Միջազգային փոխանակումների և համագործակցության կենտրոն

(International Exchange and Cooperation Center (IECC) - public welfare institution affiliated to the Ministry of Emergency Management of China)

4. **Գործուղման նպատակը.**

Ծանոթանալ Չինաստանի, ինչպես նաև «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» երկրների առողջության պահպանության և աշխատանքի անվտանգության ապահովման ոլորտը կարգավորող օրենսդրական ակտերին, կիրառվող գործիքակազմին և նրանց առաջավոր փորձին, ինչպես նաև ձեռք բերված փորձառությունը և տեղեկատվությունն իրացնել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրական գործառույթների իրացման, մարդկային ռեսուրսների զարգացման, աշխատանքի

արդյունավետության բարձրացման և վերահսկողական համակարգերի հետագա զարգացման նպատակով:

5. **Քննարկված թեմաները.**

Միջոցառման ընթացքում քննարկվել են՝

- Չինաստանի ազգային առանձնահատկությունները, սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ուղղությունները և զարգացման հեռանկարները.
- Չինաստանի արտակարգ իրավիճակների կառավարման համակարգի կառուցվածքը, ձևավորումը, զարգացման փորձը և հիմնական առանձնահատկությունները.
- արտակարգ իրավիճակների կանխարգելման, արձագանքման և կառավարման ժամանակակից մոտեցումները.
- աշխատանքի անվտանգության ոլորտում Չինաստանի օրենսդրական և նորմատիվ կարգավորումները, ստանդարտները և դրանց զարգացման հիմնական ուղղությունները.
- աշխատանքի անվտանգության պետական վերահսկողության և իրավակիրարկման մեխանիզմները.
- աշխատանքի անվտանգության կառավարման համակարգերի ձևավորումն ու գործնական կիրառումը.
- աշխատանքի անվտանգության ապահովման գործում ձեռնարկություններում առաջնային պատասխանատվության և ինքնակառավարման մեխանիզմները.
- վթարների և վտանգների մասին ներքին հաղորդման և աշխատողների խրախուսման համակարգերի ներդրման փորձը.
- աշխատանքի անվտանգության ռիսկերի կանխարգելման, բացահայտման և կառավարման արդյունավետ գործիքները.
- SCORE ծրագրի կիրառման փորձը Չինաստանում, դրա դերը փոքր և միջին ձեռնարկություններում աշխատանքի անվտանգության կառավարման կատարելագործման գործում, ինչպես նաև արտակարգ իրավիճակների կառավարման առաջադեմ գործիքների և կառավարման մոդելների, այդ թվում՝ «Միասնական քարտեզ» համակարգի կիրառման փորձը.
- տեղական ինքնակառավարման մարմինների դերը արտակարգ իրավիճակների կառավարման և աշխատանքի անվտանգության ապահովման գործում.
- «Երկակի պատասխանատվության» համակարգի կիրառման փորձը աշխատանքի անվտանգության ոլորտում.

- արտակարգ փրկարարական թիմերի ձևավորման, զարգացման և մասնագիտական պատրաստվածության ապահովման փորձը.
- արտակարգ իրավիճակների մշակույթի և համապատասխան կարողությունների զարգացման փորձը տեղական մակարդակում.
- փոքր և միջին արտադրական ձեռնարկություններում աշխատանքի անվտանգության ստանդարտացված համակարգերի ներդրման և կիրառման փորձը.
- դասընթացի խորագրի ներքո այլ թեմաներ:

<u>Օրակարգը կցվում է:</u>

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հայաստանի Հանրապետությունից գործուղված պատվիրակությունը հանդես եկավ բացման խոսքով, որով ինչպես ներկայացվեց ընդհանուր նկարագրողական տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության վերաբերյալ, այնպես էլ՝ մասնավորեցվեց դասընթացի խորագրի մասով ՀՀ փորձառությունն ու դասընթացին մասնակցության ակնկալիքներն ու հետաքրքրող թեմաները:

Քննարկված հիմնական հարցերը առնչվում են 5-րդ կետի շրջանակներում ներկայացված թեմաներին:

Պեկինում, ինչպես նաև Հունան նահանգի Սյանթան քաղաքում կազմակերպվել են մի շարք ուսումնական այցելություններ դասընթացի խորագրի ներքո հետաքրքրական որոշ ձեռնարկություններ և ուսումնական բազաներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Միջոցառման արդյունքում որոշումներ չեն ընդունվել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացի ընթացքում ներկայացված տեղեկատվության և ուսումնասիրված լավագույն փորձի հիման վրա առաջարկվում է քննարկել Հայաստանի Հանրապետությունում, հատկապես բարձր ռիսկայնություն ունեցող ոլորտների

կազմակերպություններում, աշխատողների առողջության պահպանման և աշխատանքի անվտանգության ապահովման նպատակով Չինաստանում կիրառվող ժամանակակից տեխնիկական և կազմակերպական լուծումների, ինչպես նաև **SCORE ծրագրի կամ դրա առանձին գործիքների պետական մակարդակով ներդրման** հնարավորությունները:

Մասնավորապես՝ նպատակահարմար է ուսումնասիրել տեղեկատվական տեխնոլոգիաների, հեռավար մոնիթորինգի և վերահսկողության համակարգերի, ռիսկերի գնահատման վրա հիմնված վերահսկողական մեխանիզմների, արտադրական անվտանգության ինքնակառավարման գործիքների, ինչպես նաև աշխատողների ներգրավվածության և աշխատանքի անվտանգության արդյունավետության գնահատման համակարգերի կիրառելիությունը ՀՀ-ում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Լուսինե Հարությունյան

Հեղինե Բաղալյան

Աննա Գևորգյան

Կից ներկայացվում է միջոցառման օրակարգը:

14.08.2026թ.